

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԸՆԴՈՒՆԵՅ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ Կիրակի, 19 Փետրուարին ընդունեց սուրիական-լիբանանեան խորհրդարանական եւ բարեկամական յանձնախումբի անդամները:



Նախագահ Ասատ շեշտեց, որ Սուրիան բարձր կը գնահատէ Լիբանանի մարդկային կեցուածքը Սուրիոյ հանդէպ պաշտօնական եւ ժողովրդային մակարդակներով, Լիբանանի ուղղած մարդասիրական օգնութիւնները, ինչպէս նաեւ Լիբանանի օդակայաններու եւ Նաւահանգիստներու տրամադրումը Սուրիա ուղարկուած ժամանակակիցներուն:

Շար.՝ Էջ 9 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԸՔԱՆՈՒԽԲՈՎ ՅԱԲԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՀԱԼԷՊԻ ԿՈՒՍԱԿՅԱՊԵՏԻՆ



Հինգշաբթի, 16 Փետրուար 2023-ի յետմիջօրէին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ, հոգեւորականներէ եւ ազգայիններէ բաղկացած շքախումբով ցաւակցական այցելութիւն տուաւ Հալէպի կուսակցապետ տիար Ահմատ Մաստուրին:

Նորին Սրբութիւնը զօրակցելով Սուրիոյ ժողովուրդին, ցաւակցութիւն

Շար.՝ Էջ 9 >

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՔԱՆՈՒԽԲՈՎ ՅԱԲԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՀԱԼԷՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 16 Փետրուար 2023-ի յետմիջօրէին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ հոգեւորականներէ եւ ազգայիններէ բաղկացած շքախումբով ցաւակցական այցելութիւն տուաւ Հալէպի Նահանգապետ Յուսէյն Տիապին, Նահանգապետարանի իր գրասենեակէն ներս:



Նորին Սրբութիւնը զօրակցելով Սուրիոյ ժողովուրդին, ցաւակցութիւն

Շար.՝ Էջ 9 >

ՌԻՇԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՄԸ ԿՐԿԻՆ ՅՆՅԵՅ ՍՈՒՐԻԱՆ

Երկուշաբթի, 20 Փետրուարի երեկոյեան ժամը 20:04-ին, Աղեքսանտրէի մէջ տեղի ունեցած երկրաշարժ մը, 6,3 ռիխթըր ուժգնութեամբ, ցնցեց Հալէպը, Դամասկոսը, Լաթաքիան, Թարթուսը եւ Բեսապը:

Սուրիոյ Երկրաշարժներու Ուսումնասիրման Ազգային կեդրոնը յայտնեց.

«Ժամը 20:04-ին տեղի ունեցած երկրաշարժին ուժգնութիւնը Սուրիոյ Նահանգներուն մէջ հետեւեալն էր.

- Լաթաքիա 6,5 ռիխթըր (ուժեղ)
- Բեսապ աւան 6,5 ռիխթըր (ուժեղ)
- Թարթուս 6,4 ռիխթըր (ուժեղ)
- Հալէպ 6,3 ռիխթըր (ուժեղ)
- Հոմս 5,5 ռիխթըր (միջին ուժգնութիւն)
- Դամասկոս 5,3 ռիխթըր (միջին ուժգնութիւն)



Դամասկոսի արուարձաններ 5 ռիխթըր (միջին ուժգնութիւն) Սուլեյտա 4 ռիխթըր (տկար)»:

Շար.՝ Էջ 9 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ

Արամ Ա. Կաթողիկոս. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր Թեմերով, Կառոյցներով, Մարմիններով, Իր Բոլոր Կարելիութիւններով Սուրիահայրութեան Հետ Է»



Սուրիոյ մէջ տեղի ունեցած աղետալի երկրաշարժէն ետք, Հինգշաբթի, 16 Փետրուար 2023-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ, հովուապետական զօրակցական այցելութեամբ, շքախումբով ժամանեց Հալէպ, գտնայնաբար սուրիահայրութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութիւնը յայտնելու անոր:

Շար.՝ Էջ 12 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿՈՉԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ԵՐԿՐԱՇԱՐՄԵՆ ԵՏՔ ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«ԻՄ ԶԱՅՆՍ ՄԻԱՑՆԵԼՈՎ ՍՈՒՐԻՈՅ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ՀՈԳԵՒՐ ՊԵՏԵՐՈՒ ՆԱԲԱԳԱԿԱՆ ԶԱՅՆԻՆ, ԿՈՉ ԿՈՒՂԴԵՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՄԱՅՆՔԻՆ ՎԵՐՋ ՏԱՂՈՒ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ ՆԱՍԱՏՏՈՒՄԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԱՐԵԼԻ ՓՈՒԹՈՎ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆՆԱԿՅԵՇՏ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ինձի համար միշտ յատուկ ուրախութիւն եղած է ըլլալ Սուրիոյ մէջ այն երկրին, որ Յեղասպանութենէն յետոյ ընդունեց շարունակ ճողոպրած մեր ժողովուրդի գաւազները ու իր հայրենիքը եւ հացն ու ջուրը բաժնեց իրենց հետ: Աշխարհացրիւ մեր ժողովուրդի գաւազները երբեք չեն մոռնար Սուրիոյ ժողովուրդին ցուցաբերած սերը, վստահութիւնն ու զօրակցութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ:



Այսօր սակայն վշտաբեկ սրտով ու ցաւով կ'այցելեմ Սուրիա եւ ականջալուր ու ականատես կ'ըլլամ երկրաշարժին յառաջացուցած ահաւոր քանդումներուն ու մարդկային զոհերուն, ինչպէս նաեւ հարազատներ կորսնցուցած անհատներու եւ անտուն մնացած բազմաթիւ ընտանիքներուն: Փաստօրէն, ահաւոր ողբերգութեան մը դիմաց կը գտնուի

Շար.՝ Էջ 7 >

Խմբագրական

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ

Սուրիոյ տնտեսական շրջափակումը ազդեց առաւելաբար Սուրիոյ ժողովուրդին ու աշխատուծին վրայ:

Շրջափակման հետեւանքով առողջապահութեան, տնտեսութեան ոլորտին մէջ յառաջացած դժուարութիւնները, ինչպէս նաեւ երկրի գործարարներուն հասած ուղղակի հարուածը, սննդամթերքի եւ այլ արտադրութիւններու արտածման ու ներածման առումով եղած սահմանափակումները վնաս հասցուցին առաւելաբար Սուրիոյ ժողովուրդին:

Պատերազմի հետեւանքով արդէն իսկ բազում դժուարութիւններ ապրած, քարիւղի երկրի հիւսիսարեւմտեան շրջանի ուժերուն վերահսկողութեան տակ եղած ըլլալուն բերումով վառելանիւթի տագնապ դիմագրաւած ժողովուրդը կենցաղային վատ պայմաններու մէջ ապրեցաւ յատկապէս վերջին երեք տարիներուն:

Վրայ հասաւ աղետալի երկրաշարժը:

Անկասկած երկրաշարժի զոհերուն թիւը շատ անելի նուազ պիտի ըլլար, եթէ չըլլար տնտեսական շրջափակումն ու փրկարարական տարբեր կողմեր շուտ հասնէին Սուրիա:

Երկրաշարժի առաջին օրերէն Միացեալ Նահանգներուն եւ արեւմտեան աշխարհին ուղղուած տարբեր կոչերը մասամբ արդիւնաւորուեցան եւ ԱՄՆ որոշ պատժական սահմանումներ չեղեալ համարեց, սակայն ոչ բոլորը:

Մարդասիրական մղումներէ եւ մարդու իրաւունքներու սկզբունքներէ մեկնելով, հարկ էր վերջ տալ պատիժներուն ամբողջապէս, առիթ տալու Սուրիոյ աղետահար ժողովուրդին օգտուելու օգնութիւններ ստանալու իր առաւելագոյն իրաւունքներէն ու գէթ երկրաշարժի այս տագնապը յաղթահարելու:

Սակայն տակաւին առկայ են շատ մը կաշկանդումներ, որոնք կը խոչընդոտեն ժողովուրդին փրկութեան ու բարեկեցութեան համար հասանելի օժանդակութիւնները:

ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետը երկրաշարժին առիթով Հալէպ այցելութեան առաջին իսկ ժամերուն մամլոյ ներկայացուցիչներուն ներկայութեան իր ձայնը միացուց Սուրիոյ եկեղեցիներու հոգեւոր պետերու հաւաքական ձայնին եւ կոչ ուղղեց միջազգային համայնքին վերջ տալու Սուրիոյ դէմ հաստատուած պատժամիջոցներուն եւ կարելի փութով օժանդակելու Սուրիոյ ժողովուրդի անհրաժեշտ կարիքներուն:

Այլ տեղ մը շրջափակման ենթակայ է նաեւ Արցախի ժողովուրդը: Ան եւս պատերազմէն հազիւ դուրս եկած կ'ենթարկուի տնտեսական, առողջապահական ու մարդկային տագնապալի կացութեան Ատրպէյճանի պարտադրած շրջափակման հետեւանքով:

Շրջափակումները անմարդկային դրսեւորումներ են, որոնց դէմ պետք է ձայն բարձրացնել ամենուրեք, որպէսզի մարդկային ու մարդասիրական մօտեցումները չանհետանան քաղաքական փապուղիներու մէջ եւ մարդկայնութիւնը վեր մնայ քաղաքական սրումներէ:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Կիրակի օր Օման մեկնեցաւ, ուր հանդիպում ունեցաւ Օմանի Սուլթան Հայսամ պըն Թաբէքին հետ:



-Հալէպի Առողջապահական կեդրոնի տնօրէն տոքթ. Չիատ ալ-Հաճ Թահալայտեց «Հալէպի մէջ յետցուցմանային վերջին երկրաշարժէն ետք փոփոխ եկած շէքերուն հետեւանքով վիրաւորներ չկան: «Ալ Ռազի» հիւանդանոց ներկայացան մարդիկ, որոնք վախի ու խուճապի հետեւանքով անհասկացած էին»:



-Հալէպի նահանգային խորհուրդի ղեկավար Մուհամմետ Հիճազի «Ռաթան անլայն»-ին յայտնեց, որ վերջին ցնցումին հետեւանքով զոհեր կամ վիրաւորներ չեն արձանագրուած, սակայն վախի ազդեցութեան տակ ոմանք ուշագնաց եղած են եւ անմիջապէս բժշկական օգնութիւն ստացած:



Ճիշդ չէ այն տեղեկութիւնը, թէ Հալէպի կարգ մը շրջաններու մէջ մէկէ անելի բնակելի շէքեր փոփոխ եկած են: Փոփոխ եկած են Պոսթան Փաշայի եւ Հիւլլիկի մէջ երկու անբնակ շէքեր, որոնք 6 Փետրուարի երկրաշարժին վնասուած եւ պարպուած էին բնակիչներ:

-Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ յայտնեց. «Այն պահուն, երբ Սուրիան 6 Փետրուար 2023-ին տեղի ունեցած երկրաշարժին աղետալի հետեւանքները յաղթահարել կը փորձէր, երկրաշարժի զոհուածները կը թաղէր, վիրաւորները կը բուժէր, միջազգային օգնութիւններ եւ ցաւակցութիւններ կը ստանար: Իսրայէլ, Կիրակի, 19 Փետրուար 2023-ին, օդային յարձակում գործեց Դամասկոսի բնակչութեամբ հոծ թաղամասերու վրայ, որուն հետեւանքով զոհեր, վիրաւորներ եւ նիւթական բազմաթիւ վնասներ արձանագրուեցան, առաւել խախտուեցաւ տարածաշրջանի խաղաղութիւնն ու անվտանգութիւնը»:



Նախարարութիւնը անելցուց. «Սուրիա ՄԱԿ-ի քարտուղարութենէն եւ Անվտանգութեան Խորհուրդէն կ'ակնկալէ դատապարտել սուրիական հողերուն վէայ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումներն ու ոճրագործութիւնները, յատկապէս այս աղետալի պայմաններուն մէջ, եւ անմիջապէս վերջ տալ անոնց»:

Սուրիան անգամ մը եւս կոչ կ'ուղղէ Իսրայէլի դաշնակիցներուն եւ աջակիցներուն, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին՝ Իսրայէլի եւ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու գործած յարձակումները կանխելու գծով իրենց վստահուած դերը կատարելու»:

-Կիրակի, 19 Փետրուար 2023-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Իսրայէլ բազմաթիւ հրթիռներ արձակեց Դամասկոսի եւ անոր շրջակայքին վրայ՝ թիրախ դարձնելով բնակչութեան հոծ թաղամասեր:



Յարձակումին հետեւանքով արձանագրուեցան 5 զոհեր, 15 վիրաւորներ եւ նիւթական ահաւոր վնասներ:

Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:

Լուրեր Հայաշխարհին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՋ ԵՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ԹՈՒՐԷՐՈՅ ՇԵՏ ՍԱՀՄԱՆԻՆ ԳՏՆՈՒՂ ԿԱՍՈՒՐՁՆԵՐՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԵՆԹԱԿԱՅ ԵՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ»

Թուրքիոյ հետ սահմանին գտնուող կամուրջներն ու ճանապարհները ենթակայ են շահագործման: Տեղեկութիւնը կը յայտնէ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը՝ պատասխանելով «Սփութիք Արմենիա»-ի գրաւոր հարցումին:



«Աշխատանքներ պիտի իրականացուին երրորդ երկիրներու քաղաքացիներու, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ դիւանագիտական անձնագիրներ ունեցող քաղաքացիներու համար ցամաքային սահմանի հատման գործընթացը աւարտին հասցնելու ուղղութեամբ», աւելցուցած են արտաքին գործոց նախարարութենէն:

ՌՈՒՍ ԽԱՂԱՂԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԲԵՌՆԵՐ ՏԵՂԱՓՈԽԱԾ ԵՆ ԱՐՃԱՆ

Ռուս խաղաղապահ զօրախումբը կը շարունակէ գործադրել Լեռնային Ղարաբաղի տարածքին մէջ իր առաջադրանքները: Ռուս խաղաղապահները 30 հսկողութեան կետի վրայ կը վերահսկեն կացութեան եւ զինադադարի պահպանումին: Այս մասին կը նշուի Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան հաղորդագրութեան մէջ:



Ռուս խաղաղապահներու իրամանստարութիւնը Ատրաբայեանական եւ հայկական կողմերուն հետ կը շարունակէ Ստեփանակերտ-Գորիս ճամբուն վրայ անարգել երթելու վերականգնելու շուրջ բանակցային հոլովոյթը:

Մարտակերտի, Մարտունիի, Շուշիի շրջաններուն մէջ եւ Բերձորի միջանցքին մէջ պարեկութիւն կատարուած է չորս ճամբաներով:

Ռուս խաղաղապահ զօրակազմի շարասիւնը՝ մարդասիրական բեռներով բեռնուած, ուղեկցուած է Գորիս-Ստեփանակերտ ճամբով: Մարտունիի շրջանին մէջ կատարուած է մարդասիրական աշխատանք՝ բազմազան քանակութեամբ ընտանիքներուն, հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներուն եւ Համաշխարհային Բ. պատերազմի մասնակիցներուն պարենային փաթեթներ բաժնելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, 23 նոյեմբեր 2020-էն ի վեր ռուսական խաղաղապահ զօրակազմի սակրաւորական խումբերուն կողմէ չպայթած ականներէն եւ ռումբերէն մաքրուած է 2510,8 հեկտար տարածք, 689,5 քիլոմետր ճամբայ, 1940 շէնք, յայտնաբերուած են կազմաքանդուած է 26765 պայթուցիկ կիւթ:

Ռուս խաղաղապահներու անվտանգութիւնը ապահովելու եւ հաւանական միջադէպերը կանխարգիլելու համար շարունակական համագործակցութիւն կը կատարուի Ազրայեանի եւ Հայաստանի զինեալ ուժերու սպայակոյտերուն հետ:

ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՃԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ՝ ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ՇԱՐԾՄԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

35 տարի առաջ՝ 1988 թուականի Փետրուարի 20-ին, ԼՂԻՄ բարձրագոյն ներկայացուցչական մարմինը, ժողովրդական պատգամաւորների 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանում արտայայտելով ինքնավար երկրամասի ժողովրդի բացարձակ մեծամասնութեան կամքն ու ցանկութիւնը, պատմական որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը Ազրայեանի ԽՍՀ կազմից դուրս գալու եւ Հայաստանի ԽՍՀ-ին վերամիաւորուելու մասին: Այդ որոշումը լիովին համապատասխանում էր ԽՍՀՄ գործող սահմանադրութեանը եւ միջազգային իրաւունքի սկզբունքներին: Փետրուարի 20-ի որոշումը պայմաններ ստեղծեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութեան կազմաւորման եւ նրա միջազգային ճանաչման գործընթացը տանելու:



համաշխարհային հանրութեան կողմից դաւանուող իրաւական չափանշերով:

1988 թուականի իրադարձութիւնները զօրաշարժի ենթակցեցին համայն հայութեանը: Սեփական հայրենիքում արժանապատիւ ու ազատ ապրելու եւ ազգային պետականութիւն ունենալու շարժումը համահայկական բնոյթ ստացաւ: Արցախը դարձաւ համազգային զարթոնքի խորհրդանիշ, իսկ ազգային-ազատագրական պայքարի արդիւնքում հայ ժողովուրդը վաստակեց անկախ պետականութիւն ունենալու իրաւունքը:

1988 թուականի Փետրուար 20-ի անկիւնաքարային նշանակութեան որոշմանը յաջորդեց 1991 թուականի Սեպտեմբերի 2-ի ԼՂԻՄ մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ ընդունած հռչակագիրը, որը նոյն թուականի Դեկտեմբեր 10-ի համաժողովրդական հանրաքուէի միջոցով, միջազգային իրաւունքի չափանշերին համապատասխան, ամբողջացրեց Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութեան կազմաւորման գործընթացը:

35 տարիների ընթացքում համահայկական տիրոյթում իրագործուած ազգային ամեն մի ծրագրի գաղափարական հենքը 1988-ի իրադարձութիւններն էին:

Երեքուկէս տասնամեակների ընթացքում մենք անցել ենք բազմաթիւ փորձութիւնների միջով: Այսօր էլ Ազրայեանը շրջափակման միջոցով փորձում է կտրել արցախահայութեան կամքը:

ՊԱՅՔԱՐԸ պէտք է դառնայ մեր կեանքի բոլոր ասպարէզների կարգախօսը: Արտայայտելով Արցախի ժողովրդի կամքն ու ցանկութիւնները՝ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը:

Կոչ է անում միջազգային կառույցներին եւ ՄԱԿ-ի անդամ, մասնաւորապէս Միւսքի խմբի համանախագահ երկրներին՝ յայտարարութիւններինց եւ յորդորներինց գատ, գործնական քայլերով՝ քաղաքական, տնտեսական, ռազմական գործիքակազմերով, կանխել Ատրաբայեանի ցեղային գտումների եւ ցեղասպան քաղաքականութիւնը:

Դիմում է սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան մեր հայրենակիցներին՝ հայ ժողովրդի արժանապատուութիւնը եւ լինելիութիւնը պաշտպանելու նպատակով համախմբել հայութեան ներուժը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել՝ սանձելու Ատրաբայեանի ծաւալապաշտական ու յարձակողապաշտ գործողութիւնները:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը՝ որպէս ժողովրդի ձայնը ներկայացնող հաւաքական մարմին, հաւատարիմ է մարդու հիմնարար իրաւունքներին եւ, առաջնորդուելով ՄԱԿ-ի կանոնադրութեան արժեքներով ու սկզբունքներով, վճռական է տրամադրուած՝ իրացնելու իր պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու համաժողովրդական կամքը: Մեր խոնարհումը բերելով բոլոր ժամանակներում յանուն ՀԱՅՐԵՆԻԺԻ իրենց կեանքը նուիրաբերած հազարաւոր նահատակների յիշատակին, պատրաստակամ ենք շարունակել նրանց սուրբ գործը՝ յաղթական հանգրուանի հասնելու համար:

Համայն հայութեանը եւ Արցախի բարեկամներին շնորհաւորելով յիշարժան սոսի կապակցութեամբ, լիայոյս ենք, որ փետրուարեան զարթոնքը նոր լիցք կը դառնայ համազգային իղձերի իրականացման ճանապարհին:

Ստեփանակերտ
20 Փետրուար 2023

ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ՉՕՐԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 21 Փետրուար 2023-ի երեկոյեան, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, ընկերակցութեամբ՝ Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի եւ Ազգ. Վարչութեան ատենապետ մեր Սունայուլ Սունայուլեանի, զօրակցական այցելութիւն տուաւ հայկական կեդրոններէն ներս ապաստանած հայորդիներուն, որոնք համախմբուած են երկրաշարժի վտանգէն պաշտպանուելու համար:



Սրբազան Հայրը այցելեց հետեւեալ կեդրոնները.- Ա. Մանուկեան Ժ. Տան «Սպիտակ» եւ «Նիւ Սպիտակ» սրահները, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մեծ եւ փոքր ներքնասրահները, «Սահակ Նալպաստեան» սրահը (Նախկին Տիգրանեան), Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի «Չարեհեան» սրահը, ՀՄԸՄ-ի ընտանեկան պարտեզը, Կրթասիրաց Մշկթ. Միութեան շրջափակը եւ



ՀԲԸՄ-ի Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարանի «Միքայէլ Եսայեան» մանկապարտեզի սրահը:

Սրբազան հայրը տեսակցելով ընտանիքներուն հետ, իր հայրական օրհնութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց հայորդիներուն, գօտեպնդեց զանոնք եւ պատուիրեց, որ Ամենակալին աղօթելով համբերատարութեամբ եւ իրենց ներքին խաղաղութիւնը պահելով շրջանցեն հետզհետէ մեղմացող երկրաշարժի յաճախակի ցնցումները:

Ներկաները, Սրբազան Հօր ձայնակցելով միասնաբար «Տէրունական Աղօթք»-ը արտասանեցին եւ «Տէր Ողորմեա՛» երգեցին, հայցելով Բարեխնամ Աստուծոյ պաշտպանութիւնը:

2022-Ի ԾՆՈՒՆԳ ՀԱԼԵՊԱՆԱՅ 74 ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒ ԿԱԹ ԵՒ ԿԵՆՅԱՂԱՅԻՆ ԱՆՀՐԱԾԵՆՏ ԻՐԵՐ ԲԱՆԽՈՒԹՅԱՆ

Չօրակցելով աղետալի երկրաշարժի ենթարկուած մեր ժողովուրդի զաւակներուն, Երեքշաբթի, 21 Փետրուար 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Մարմինը Հայէպի մէջ 2022-ի ծնունդ 74 նորածիններու բաժնեց ծրարներ, որոնք կ'ընդգրկէին կաթ, տակաշոռ, ծածկոց, ներքնագգեստ եւ գազակ:

Նպաստից Մարմինի անդամները գօտեպնդելով նորածիններու ծնողները, ապահով ու անփորձանք օրեր մաղթեցին անոնց:



ՀԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԻՐԻՄԵԱՆ. «ԵԹԷ ԿՐԿԻՆ ՈՒԾԵՂ ՅՆՅՈՒՄ ԸԼԼԱՅ, ԲԵՍԱՊԻ Ս. ԱՍՏՈՒԱՍՏԻՆ ԵԿԵՂԵՅԻՆ ԿՐԵԱՅ ՓԼՈՒՉՈՒՄ»



Սուրիոյ հայաբնակ Քեսապ ամառի Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ 6 Փետրուարին տեղի ունեցած աւերիչ երկրաշարժէն վնասուած էր, 20 Փետրուարի երկրաշարժային ուժեղ յետցնցումին հետեւանքով փլուզման վտանգի շեմին է:

«Մենք հազիւ սկսած էինք ուշքի գալ առաջին երկրաշարժէն եւ հետեւանքները դարմանել: Վերջին երկրաշարժին կեդրոնը շատ մօտ էր Քեսապին, եւ այդ պատճառով շատ ուժեղ ցնցում էր: Եթէ կրկին նման ուժեղ ցնցում ըլլայ, եկեղեցին կրնայ փլուզուիլ, արդէն իսկ փլուզման եզրին են փոքր գմբէթները», ըսաւ հայր Անդրանիկ Բիրիմեան:

Հայր սուրբը յայտնեց, որ անօթեան մնացած հայերուն չենք կրնար եկեղեցւոյ մէջ ապաստանիլ տալ, որովհետեւ փլուզման վտանգը մեծ է:

Քեսապի Հայ աւետարանական Նահատակաց վարժարանի շրջափակին մէջ վրան լարած են տեղւոյն պատասխանատուները, ուր կ'ապաստանի բնակարաններէն դուրս եկած բնակչութիւնը:

ԱՄՈ ԿԱՐԴՈՒՇԵԱՆ. «ԱՌԹԱՔԻՈՅ ՄԷՋ ԵՐԿՐԱՇԱՐՄԻՆ ՇԵՏԵԱՆՔՈՎ ՅԱՐԳ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԿԱԾ Է 58 ՎՆԱՍՈՒԱԾ ԲՆԱԿԱՐԱՆ»

«Գանձասար» կապ հաստատեց Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ Աւօ Կարպուշեանի հետ մանրամասնութիւններ իմանալու Լաթաքիոյ մէջ երկրաշարժին հետեւանքներուն մասին:

Կարպուշեան յայտնեց.

«Թ ա դ ա կ ա ն ու թ ե ա ն հոգանաւորութեամբ եւ գործակցաբար երկու միութիւններու հետ՝ Սուրիահայ Օգնութեան Խաչի եւ ՀԲԸՄ-ի, անմիջապէս գործի լծուեցանք: Օգնութիւններ հասան այն ընտանիքներուն, որոնք բնակարանները բաւական վնասուած էին եւ իրենք դուրս եկած էին բնակարաններէն: Ազգ. Առաջնորդարանի թելադրանքին համաձայն, սկսանք վնասուած բնակարանները ցանկագրել: Մինչեւ 20 Փետրուար ունեինք 13 անբնակելի բնակարան, իսկ 20 Փետրուարի երկրաշարժին կրկին ունեցանք անօթեան մնացած այլ լաթաքիահայեր եւս, ուստի վնասուած բնակարաններու թիւը բարձրացաւ: Բարեբախտաբար երկու երկրաշարժներուն հետեւանքով հայ գոհեր եւ վիրաւորներ չարձանագրուեցան: Ժողովուրդը խուճապի մատնուեցաւ եւ նիւթական վնասներ կրեց:



Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Գանձասար» սրահը որպէս ապահով վայր յատկացուեցաւ բնակչութեան: Սրահին դռները բաց են մինչ օրս: Ժողովուրդը կը գիշերէ այնտեղ, իսկ ցերեկը իւրաքանչիւրը կը լծուի իր աշխատանքին, թերեւս հոգեբանական վիճակ է ժողովուրդին մօտ որ կը շարունակուի:

Մարդասիրական օգնութիւններ ստացանք Սուրիոյ մէջ գործող զանազան եկեղեցական կողմերէ, ինչ որ արդէն տեղւոյն վրայ բաշխուեցաւ ապաստանեալ ժողովուրդին, նաեւ սննդակողովներ պատրաստուեցան եւ յատկացուեցան ժողովուրդին:

Մեր ակումբը կամ կեդրոնները չենք բացած ժողովուրդին, որովհետեւ անոնք կը գտնուին բարձրալար կէտերու ներքեւ, հետեւաբար վտանգաւոր են: Եկեղեցւոյ սրահը աւելի ապահով է: Ուստի ան որ կ'ուզէ ապաստանիլ բնակարանէն դուրս, կրնայ «Գանձասար» սրահ ներկայանալ: Նոյնիսկ թաղեցիները կ'ապաստանին այստեղ:

Լաթաքիոյ մէջ մեր մօտ արձանագրուած ունինք 58 վնասուած բնակարան: Անոնք նորոգութեան կարիք ունին, 20-ը լրիւ անբնակելի է, որովհետեւ շէնքերուն հիմը խախտած է: Կապի մէջ ենք SALT եւ ACN կազմակերպութիւններուն հետ, որոնք խոստացան աջակցիլ շինարարութեան աշխատանքներուն եւ արդէն SALT-ը երկու անգամ նիւթական օժանդակութիւն տրամադրեց մեզի եւ ըստ յարմարութեան կը բաժնուի ժողովուրդին:

Լաթաքիոյ պետական լրատուամիջոցներու տուեալներով գոհերու ընդհանուր թիւն է 850, վիրաւորներունը՝ 3000: Համայնքը բարեբախտաբար որեւէ զոհ չունի:

Ազգային Սրբոց Նահատակաց Վարժարանը ստուգուելէ ետք կայուն համարուեցաւ: Դասաւանդութիւնը տակաւին յետաձգուած կը մնայ մինչեւ որ Կրթութեան Նախարարութեան յայտարարէ դասաւանդութեան վերսկսման մասին»:

ՍՐԲՈՑ ՎԱՐՊԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՏՕՆԻ ՅՈՒՏԻ ՎՐԱՆՈՒՄԻ ԿԱՅ ԵՐԵՔ ԿԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՄՆ ԵՎ ԿԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՄՆ ԵՎ ԿԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՄՆ

Կառչած մնալով մեր ազգային-եկեղեցական արժեքներուն եւ յիշատակելով մեր ինքնութիւնը հաստատող Սրբոց Վարդանանց զօրավարներու դիւցազնական հերոսամարտին տօնը, Կիրակի, 19 Փետրուար 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Նախագահութեամբ հայ երեք համայնքապետներուն՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի եւ Սուրիոյ Յայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանի եւ հիւրընկալութեամբ՝ Գերապայծառ Տիրոջ, Յայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Սրբ. Վարդանանց Զօրավարաց տօնին նուիրուած յուշահանդէս, որուն ներկայ գտնուեցան նաեւ ՀՀ Յաւելի Գլխաւոր Յիւսպտոսութեան Խորհրդական-Յիւսպտոս Բարգէն Պատալեան, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան Խումբի փոխգնդապետը եւ ներկայացուցիչները, հոգեւոր հայրեր եւ պատուելիներ, հալեպահայ կազմակերպութիւններու, եկեղեցական մարմիններու, բարեսիրական, մարզական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ եւ ժողովուրդի գաւակներ:



Երեք համայնքապետները «Տէր Ողորմեա՛»-ի երգեցողութեան ներքոյ մոմավառութիւն կատարեցին, յարգելով մեր նահատակներուն եւ գոհերուն յիշատակը:

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց Մարալ Տատաղլեան: Բացման խօսք արտասանեց Սուզան Տատաղլեան, յայտնելով, որ Վարդան Մամիկոնեանի եւ իր հերոսներուն վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց իմացեալ մահով՝ մենք քրիստոնեայ մնացիք եւ պահեցիք մեր հաւատը, լեզուն եւ մշակոյթը:

Գեղարուեստական հոգեպարար յայտագիրով հանդէս եկաւ Գարօլին Բեշիշեան, մեներգելով «Սիրտ Իմ Սասանի» շարականը, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Ռուզան Պարսումեանի:



«Լուեց Ամպեր» երգը շուրթակով նուագեցին Սերեւա Պերպերեան եւ Դիա Մարիա Բեշիշեան:

Պարոյր Սեւակի «Երգ Եռաձայն» բանաստեղծութիւնը ասմունքեց Նուէր Ներսեսեան: Այնուհետեւ, «Հոգի Աստուծոյ», «Գողթի Գևարք», «Ձօն Վարդանի» եւ «Ձօն Նահատակաց» հայրենաշունչ երգերով հանդէս եկաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Ալեմշահ» երգչախումբը, խմբավարութեամբ՝ Մարգարիտ Խաչատուրեան-Պանտաքի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Ռուզան Պարսումեանի:

Օրուան բանախօսն էր Արթ. Տ. Կոմիտաս Ա. Զինյ. Տատաղլեան: Ան պարզաբանեց Վարդանանց հերոսամարտին խորհուրդը եւ անոր ունեցած անկիւնադարձային դերը մեր ժողովուրդի կեանքէն ներս, յայտնելով, որ Վարդանանց Հերոսամարտը մեզի համար կը խորհրդանշէ ինքնորոշման,



ազգային դիմագիծի պահպանման, սեփական հաւատքի ու գաղափարի ազատ կիրարկման ու մէկ խօսքով՝ իբրեւ ինքնուրոյն ազգ, իբրեւ հայ ապրելու եւ գոյատեւելու, մեր իրաւունքին հանդէպ մեր նախանձախնդրութիւնը: «Վարդանանց ճակատամարտը առասպել մը չէ իր էութեան մէջ, այլ դիւցազներգութիւն երկնուած՝ ժողովուրդին ազատատենչութեան ու հաւատքի խորունկ տենչանքէն», հաստատեց ան:

Տէր Կոմիտաս եզրափակելով ըսաւ. «Պատմութեան ընթացքին բազմաթիւ փոթորիկներ գարնուեցան հայութեան ամրակուռ ժայռին ու

փշրուեցան: Հաւատքի, կամքի ու յոյսի վրայ բարձրացած հայութեան այս տոկուն ժայռը կը մնայ ու պիտի մնայ»:

Ապա երեք համայնքապետները իրենց պատգամը ուղղեցին հաւատացեալներուն:

Սուրիոյ Յայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան անդրադառնալով Վարդանանց հերոսամարտին, դիտել տուաւ, որ երբ մեզմէ կը խլուի մեր ազատ մտածողութեան եւ մեր հայկական ուրոյն դիմագիծը պահպանելու իրաւունքը՝ մենք ինքնապաշտպանութեան կը դիմենք: 451 թուականին դիմեցիք ինքնապաշտպանութեան, եւ որպէս մեր պատմութեան կարեւոր հանգրուաններէն մէկը դրսեւորեցիք արիութիւն, այնպիսի որակաւորում մը, որ կը պատկանի ու հարազատօրէն նոյնացուած է մեր հայկական քրիստոնեական դիմագիծին, որակին, ըմբռնողութեան եւ բնութագրութեան հետ:

«Աւարայրը ներխուժած է այսօր մեր հայկական եւ սուրիական ասպնջական հայրենիքի ամբողջ տարածքին մէջ: Այսօր մեր առջեւ բացուած են բազմաթիւ, բազմատեսակ ու բազմադոյն ճակատներ, որոնց մէջ մենք պետք է կողմնորոշուինք ու նենանք» աւելցուց Վերապատուելի եւ աղօթեց, որ Աստուած տայ մեզի մեր հայկական ինքնուրոյնութիւնը վերագտնելու համար: Եւ ներկայ դժուարին պայմանները յաղթահարելու համար ուժ, որպէսզի ընթանանք քրիստոնեական հաւատքով, ազգային միասնութեամբ եւ ապագային նկատմամբ լաւատես մօտեցումով:



Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան յայտնեց, որ Սրբ. Վարդանանց տօնին յիշատակութեամբ կը հրաւիրուիք մեր ուխտը վերանորոգելու եւ մեր անձերը ինքնաքննութեան ենթարկելու, տեսնելու համար, որ անոնց ցուցաբերած քաջութեան, հաւատքին, սիրոյն, ծառայութեան եւ նահատակութեան դիմաց ի՞նչ կը ցուցաբերենք եւ որքանով պատրաստ ենք նոյնիսկ ի գին արեան պահպանելու մեր արժեքները:

Մակար Սրբազան նշեց, թէ Սրբ. Վարդանանց զօրավարները ճանչցան աստուածային ճշմարտութիւնը, բացուեցան անոր, կարողացան իմացեալ մահով յաւիտենականութիւնը ժառանգել եւ քաջութեամբ Յազկերտին ըսել. «Քու սուրդ եւ մեր պարանոցը», «Ոչ ոք կրնայ մեզմէ խլել մեր կրօնքը եւ հաւատքը», ճիշդ այնպէս ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ի՞նչ բանը կրնայ մեզ բաժնել Զրիստոսի սերէն»:

Հետեւաբար, Սրբազան Յայոց մաղթեց, որ մեզմէ իւրաքանչիւրը մէկական վարդաններ ըլլալով, Ղեւոնդեանց քահանաներուն հոգիով եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ իր հոգեւոր կեանքը ապրի, հոգեւոր դաստիարակութիւն ջանք ընտանիքի անդամներուն եւ քրիստոնեական հասկացողութեամբ դեսպան հանդիսանայ իր շրջապատէն ներս:

Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան յայտնեց, թէ Վարդանանց հերոսամարտը եւ մեր պայքարը կը շարունակուի ընդդէմ ցուլումի, որպէսզի մեր գաւակները հայերէն խօսին եւ մեր ընտանիքներուն սրբութիւնն ու մեր սուրբ անանդութիւնները պահպանուին:

Գերապայծառ Տէրը ըսաւ, որ այսօր 1572 տարիներ ետք բարոյական պայքարը կը շարունակուի Արցախի, Հայաստանի, Սուրիոյ մէջ եւ այսօր բնութեան ուժին՝ երկրաշարժին դէմ: Հետեւաբար, ան հրաւիրեց ներկաները այս հոգեպարար յուշահանդէսին ընդմէջէն վերանորոգելու իրենց ուխտը, որպէսզի միասնաբար, ձեռք ձեռքի տալով շարունակենք մեր երթը, հաստատուն մնալով մեր քրիստոնեական հաւատքին վրայ:

Գերապայծառ Տէրը իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց համայնքապետներուն եւ գնահատեց օրուան բանախօսը եւ գեղարուեստական յայտագրի բոլոր մասնակիցները:

Մարինա Պողիկեան

Պրիմալե

ԿՐՆԱՐՍ ՄԱՅՐԵՆԻԴ ԿՈՐՍՆՑՆԵԼ



Մարուշ Երամեան

Հարցումը կրնայ շատ հռետորական թուիլ, մանաւանդ Միջին Արեւելքի գաղութներու հայերու համար: Փաստօրէն սակայն բոլորս ալ ականատես կ'ըլլանք իր մայրենին կորսնցող-կորսնցուցած սերունդներու, արեւմտեան կողմն աշխարհի: Այդ ցաւը դարձանելու համար Սփիւռքի հին եւ կարելոր Միութիւններէն մին Նոյնիսկ հայերէնը լատինատառով սորվեցնելու ծայրայեղ միջոցին դիմած է:

Բայց հարցումը կը մնայ՝ կրնա՞ւ մայրենի կորսնցնել, մանաւանդ երբ որպէս սաղմ լսեր եւ այդ լեզուով աղօթող մօրը ձայնը:

Այնպէս կ'երեւի, թէ այլ ազգեր եւս Նոյն վտանգին տակ են, որովհետեւ գերմանուհի Սոֆի Հարտա կը գրէ այս մասին բաւական մանրամասն կերպով, եւ հարց կու տայ.



-Երկար տարիներ հեռու ապրելով հայրենիքէն, կրնանք «մոռնալ» մեր մայրենին:

-Բայց այս երեւոյթը յստակ գործընթաց մը չէ:

-Թէ ինչո՞ւ, ե՞րբ եւ ինչպե՞ս կը կորսնցնենք մեր մայրենի լեզուն, բարդ եւ հակա-բնագոյային իրողութիւն մըն է:

-Պայման չէ որ երկար առէն հեռացած ըլլանք մեր երկրէն. կը բաւէ որ կապ ունենանք այլ լեզուի մը հետ:

-Երբ կը սկսինք Նոր լեզու մը սորվիլ, մայրենին եւ Նորը կը սկսին մրցիլ իրարու հետ, կ'ըսէ Մոնիքա Շմիթ, Էսսէքսի համալսարանի լեզուաբաններէն մին:

-Մինչեւ 12 տարեկան, փոքրերուն ուղեղը շատ ճկուն է եւ յարմարող եւ մինչեւ այդ տարիքը փոքրիկները դիւրաւ կրնան մոռնալ իրենց մայրենին, եթէ հեռանան հայրենիքէն:

-Նոյնը չէ մեծերու պարագային, որոնք հազիւ թէ մոռնան իրենց մայրենին, բացի ծայրայեղ պարագաներու մէջ:

Գերմանացիներ, որոնք Համաշխարհային Բ. պատերազմին հեռացած են երկրէն, մոռացութեան տուած են լեզուն. «Կարծես Գերմանիան դաւաճանեց ինծի. հիմա Ամերիկան է իմ երկիրս եւ անգլերէնը՝ իմ լեզուն»:

Հետաքրքրական է սակայն, որ ճիշդ հակառակը տեղի ունեցած է Համաշխարհային Ա. պատերազմին, Ջարդի օրերուն, գաղթական հայերուն համար. անոնք ոչ միայն չեն մոռցած, այլեւ անելի մեծ կիրքով փարած են իրենց լեզուին, գայն մոռնալու վախէն սարսափած:

-Նոյն լեզուն խօսող երկրացիներուն հետ յարաբերութիւնը կրնայ հարցերը բարդացնել, որովհետեւ քիչ մղօններ կան մէկ լեզուով հաղորդակցելու, երբ բոլորն ալ երկու լեզուները գիտեն: Արդիւնքը՝ խառնածին լեզու մը:

-Մէկ լեզուն միւսը անցնիլը անշուշտ մոռնալ չի նշանակեր:

-Շատերու համար մայրենին սերտօրէն անջուած է մեր ներքին, խորունկ ինքնութեան, յուշերուն եւ անձի գիտակցութեան, ինչպէս հայերուն, գոնէ Նախկին սերունդի հայերուն համար:

Մայրենի լեզուն ընդհանրապէս բոլորին համար ալ սերտօրէն անջուած է ներքին, խորունկ ինքնութեան, անհատական յուշերու եւ անձին գիտակցութեան, իսկ հայերուն, մասնաւորաբար սփիւռքահայերուն համար, որոնք կորսնցուցած են հողը, լեզուի եւ ինքնութեան կապը շատ անելի էական եւ գորաւոր կը դառնայ:

Այսօր սակայն, գոնէ կարգ մը գաղութներու մէջ, «ներքին, խորունկ ինքնութիւն»ը եթէ ոչ անհասկնալի, ապա անտեղի եւ անօգուտ բան մըն է, մանաւանդ բան մը, որ ըստ իրենց, բնաւ չի կապուիլ լեզուին:

Բայց եթէ չի կապուիլ լեզուին, ո՞ր է ուրեմն այն վայրը, ուր ինքնութիւնը ինքզինք կը մտածէ, հետեւաբար Նաեւ կ'արտայայտէ. մանաւանդ կ'արտայայտէ:

Ասիկա հարցադրում մըն է, որ եթէ մտածուած է, բայց ձեւաբանուած չէ, հետեւաբար ամէն անգամ որ կը հնչէ, լսողները Նոր կը սկսին մտածել անոր մասին:

Սակայն երրորդ բաղադրիչ մը եւս կայ այս խնդրին մէջ՝ կենսածելը.

որովհետեւ այս երեքը՝ ինքնութիւն-լեզու-կենսածել, տեղ մը անջուած են իրարու, անտեսանելի բայց սերտ կապերով, որոնք երբ անջատուին, թերեւս շփոթ յառաջացնեն, բան մը որ իր կարգին կ'արգիլէ լեզուին տիրապետումը:

Բայց յուսադրիչ է իմանալը, որ, լեզուաբանի մը դիտանկիւնով եւ հաստատումով, «լեզուն գէշ գիտնալու» հարց չի կրնար ըլլալ:

Ջարդերուն ամենէն թե՛ օրերուն, կարգ մը հայեր, միսիոնարներուն օգնութեամբ կրցած էին ազատիլ եւ Ամերիկա հասնիլ. անոնքմէ որոշ թիւ մը անմիջապէս հեռացած էր հայութենէն, շատ արագ որդեգրած էր տեղական լեզուն եւ կենսածելը այնքան, որ անոնց գաւազները շատ ուշ, յաճախ ծնողին (մանաւանդ հօր) մահէն ետք միայն իմացած են իրենց հայ ըլլալը:

Շատ խօսուած է իսլամացած հայերու, թուրքերու եւ քրիստոնէի հետ ստիպողաբար ամուսնացած եւ, եթէ ոչ ինքնութիւնը, ապա լեզուն մոռցած աղջիկներու եւ կիներու մասին. սակայն Ամերիկայի տարածքին ինքնակամ կերպով հայութենէն հեռացած հայերու մասին գրեթէ ոչինչ գիտենք:

Յստակ է, որ այս հայերուն համար, լեզուն անխաղձիօրէն կը կապուի յիշատակներուն, եւ որովհետեւ այդ յիշատակները վերապրելու համար ՇԱՏ դժիւմ են, գանոնք դուրս կը դնեն իրենց երեւոյթներէն, եւ անզաւաբար ՎՆ որովհետեւ կապուած են իրարու ՎՆ լեզուն եւս դուրս կու գայ եւ մոռացութեան կը տրուի:

Յայտուն օրինակ մըն է ամերիկահայ նշանաւոր բանաստեղծ-արձակագիր Փիթըր Պալաքեանը, որ խօսելով իր բանաստեղծի սկիզբներուն մասին, կը պատմէ.

«Այս պատմութիւնը չէր խօսուած իմ ընտանիքիս մէջ (ակնարկելով Ջարդին եւ Տեղահանութեան). պահուած էր ծածկոցի տակ. իրականութեան մէջ ասիկա լռուած պատմութիւն մըն էր: Սօրենական մեծ մայրս, որ ինծի համար հոգեւոր ամառնող մըն էր, մահուան ճամբաներէն վերապրած մըն էր: Կորսնցուցեր է իր ամբողջ ընտանիքը, բացի փոքրիկ երկու դուստրերէն: Սերած է կերպասի եւ մետաքսի վաճառականութեամբ զբաղող ընտանիք մը, Օսմանական պետութեան հարաւ-արեւելքէն՝ Տիարպէքիէն, այսօր պատմական Հայաստանի մէջ»:

«Մեծ մօրս պատմութիւնը իմացած եմ փշրանքներով, որոնք գլխուս մէջ կարծես կը պարէին երբ փոքր էի եւ չէի հասկնար թէ ինչ ընեմ անոնցմով: Պարզապէս պահ տուած եմ այդ բոլոր մանրամասնութիւնները, եւ հասուննալէ ետք, երբ սկսայ մտածել կեանքի, պատմութեան, մշակոյթի եւ ընտանիքի մասին, այդ մանրամասնութիւնները խուժեցին միտքիս եւ ազդեցին լեզուիս եւ քերթողութեանս վրայ: Զերթուածներուս մէջ մեծ մայրս սկսաւ յայտնուիլ որպէս տիպար, ձայն եւ ուրուական ...»:

Անշուշտ գիտենք, որ Փիթըր Պալաքեան, եղբորորդին նշանաւոր Գրիգոր Ծ. Վրդ. Պալաքեանի, հեղինակը «Հայ Գողգոթան» երկիստոր յուշերուն ... հայերէն չի գիտեր, չէ սորված, իր ընտանիքին մէջ չէ խօսուած այդ լեզուով. բայց ինք, իր երկու Նոյնքան նշանաւոր հօրաքոյրներուն՝ Նոնա Պալաքեանի եւ Աննա Պալաքեանի հետ (երկուքն ալ դասախօս եղած են Նիւ Եորքի համալսարանին մէջ), երբեք չ'ուրանար իր հայկական ծնունդը, ընդհակառակը, հայկական արմատները յաճախ կ'երեւին իր քերթողութեան մէջ:

Լեզուի հարցը կը շարունակէ մնալ թե՛, իր գլխաւոր երկու բաժիններով.

-Մայրենի լեզուին կարելորութիւնը անհատին կեանքին մէջ.

-Լեզուին պայմանական ջրլալը անհատին ինքնութիւնը սահմանելու մէջ:

Բայց ի վերջոյ մայրենի լեզուին տիրապետելու եւ գայն ամօրեայի լեզուն դարձնելու հարցը - գոնէ ընտանիքին մէջ ՎՆ կը մնայ ընտրութեան հարց:

Միսիոնարականը այն է, որ այսօր շատ այլ ազգեր եւս, ստիպողաբար կամ ընտրութեամբ հեռացած իրենց հայրենիքէն, կը դիմագրաւեն ճիշդ այն հարցերը, որոնք մեզի, մանաւանդ սփիւռքահայերուս համար դարձած են հարց:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՂՍՓՈՒ...

Սկիզբ՝ էջ 1

այսօր Սուրիան: Երկրաշարժին ծանր հետեւանքները կրնան անելի ծաւալիլ, եթէ կարելի փութով ազդու միջոցներու չ'դիմուի:

Հետեւաբար, միջազգային համայնքը չի կրնար անտարբեր մնալ մարդկային այս ահաւոր ողբերգութեան նկատմամբ: Նման կացութեան դիմաց անհրաժեշտ է մէկդի դնել քաղաքական մօտեցումներ ու դիրքորոշումներ եւ որպէս մարդկային Նոյն ընտանիքին պատկանող անձեր ու ազգեր անհրաժեշտ է իրարու օգնել: Ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ, երբ մարմնին մէկ անդամը ցաւի ամբողջ մարմինը կը ցաւի (Ա. Կր 12.26): Այսօր, միջազգային համայնքը եւ անոր պատկանող բոլոր ազգերն ու երկիրները կը չուած են օժանդակելու Սուրիոյ: Արդ, սա պահուն իմ ձայնս միացնելով Սուրիոյ եկեղեցիներու հոգեւոր պետերու հաւաքական ձայնին, կոչ կ'ուղղեմ միջազգային համայնքին վերջ տալու Սուրիոյ դէմ հաստատուած պատժամիջոցներուն եւ կարելի փութով օժանդակելու Սուրիոյ ժողովուրդի անհրաժեշտ կարիքներուն, որպէսզի արդէն տնտեսական տագնապի մատնուած սուրիացի ժողովուրդը կարենայ դուրս գալ իր ներկայ ահաւոր տագնապէն:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՎՆԱՍԸ ԵՒ ԿԱՇԱՌՈՒԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅԻՄՈՒԿԾ ԵՆ ԷՐՏՈՂԱՆԻ ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ



Յարութ Սամվելյան

Թուրքիոյ մէջ օր առ օր կ'աւելնայ երկրաշարժի գոհերուն թիւը: Մեր սիրտը կը ցաւի մինչ օրս արձանագրուած գրեթէ 50 հազար գոհերու եւ մօտաւորապէս 200 հազար վիրաւորներու համար: Հնագոյն Անտիոք քաղաքը (Անթաքիա)՝ 250 հազար բնակչութեամբ, հիմնականին մէջ վերածուած է աւերակներու:

Ինչպէս գրած էի Նախկին շաբաթ, հայերը պետք է տարբերութիւն դնեն Յեղասպանութիւն իրականացուցած թրքական կառավարութեան եւ թուրք ժողովուրդին միջեւ, որ որեւէ դեր չէ խաղացած այս զանգուածային յանցագործութեան մէջ: Այսօրուան թուրքերէն ոչ մէկը ողջ էր 1915-ին:

Վերջին օրերուն, աշխարհի տարբեր երկիրներու լրագրողներ հարիւրաւոր յօդուածներ գրած են՝ մատնանշելով, որ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի կաշառակեր գործելակերպը բազմապատկած է աղետի գոհերուն թիւը: Էրտողան, որ 2003-ին իշխանութեան եկաւ իբրեւ հաւատարմութեամբ մահմետական, վերածուած է կաշառուած բռնապետի: Ինչպէս կ'ըսուի՝ «*Իշխանութիւնը կը փճացնէ, բացարձակ իշխանութիւնը*»



կը փճացնէ բացարձակապէս»: Շատ թուրքեր կը մեղադրեն Էրտողանը՝ մեծ թիւով գոհերու եւ աւելի քան 100 հազար շէքերու փլուզման կամ անոնց հասած վնասին համար. շէքեր, որոնք վատորակ կառուցուած են Նախագահի մեթափոխութեան կողմէ: Թուրքիոյ մէջ առնուազն մէկ միլիոն մարդ մնացած է անօթեւան:

Սկսինք երկրաշարժի տուրքէն, որ թրքական կառավարութիւնը սահմանած է 1999-ի երկրաշարժէն ետք, որ Թուրքիոյ մէջ պատճառ դարձած էր 17 հազար մարդու մահուան: 2021-ին, Նախագահի իրամասնագրով տուրքը 7,5 տոկոսէն բարձրացուեցաւ 10 տոկոսի, բոլոր մասնաւոր հաղորդակցութիւններու համար: Այս տուրքին միջոցով հաւաքուած միլիարդաւոր տոլարները շէքերու ամրացման եւ աղետներու կանխարգիլման համար նախատեսուած նպատակներու փոխարէն՝ օգտագործուեցան շինարարական, երթուէկային եւ գիւղատնտեսական ծրագիրներ ֆինանսաւորելու համար:

«Ռոյթըրզ» գործակալութիւնը տեղեկացուցած է մօր մը տանջագին խնդրանքին մասին. անոր երկու որդիները Անթաքիոյ մէջ, երկու օր ողջ մնացած էին փլատակներու տակ. կինը կ'աղէրսէր կռուել բերել իր գաւակները փրկելու համար: «*Թուրքիոյ մէջ շատերը կ'ըսեն, որ թիւով աւելի շատ մարդիկ կրնային ողջ մնալ 7,8 ուժգնութեամբ երկրաշարժէն, որ հարուածեց երկրի հարաւը եւ դրացի Սուրիան, եթէ արտակարգ իրավիճակներու արձագանգը ըլլար աւելի արագ եւ աւելի լաւ կազմակերպուած*»: Կազմակերպուած փրկարարական աշխատանքներու բացակայութեան պատճառով, մարդիկ ստիպուած եղած են մերկ ձեռքերով փորել փլատակները՝ փրկելու համար իրենց ընտանիքի անդամները:

Թուրք գիւտարարները կ'ամ ներկայ չեն եղած փրկարարական աշխատանքներուն, կ'ամ անոնք շատ ուշ հասած են՝ սպասելով Էրտողանի քաղաքացիական պաշտօնեաներու իրամասններուն: Հետաքրքրականը այն է, որ Էրտողան «*յայտնի դարձած է աւելի քան երկու տասնամեակ առաջ, մասնաւորապէս 1999-ին, հզօր երկրաշարժի արձագանգի վերաբերեալ իր ընկալաւորութեան պատճառով*», կը հաղորդէ «Ռոյթըրզ»: Փոխարէնը, «*ան դատարկեց պետական հիմնարկները, հաւատարիմները նշանակեց առանցքային պաշտօններու վրայ, ջնջեց քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւններու մեծ մասը եւ հարստացուց իր ընկերները՝ իր շուրջ հաւատարիմներու փոքր շրջանակ մը ստեղծելու համար*», ըստ Foreignpolicy.com-ի: Հիմնական ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդ Քեմալ Բըլըչտարօղլու ըսած է, որ անցեալ շաբաթ տեղի ունեցած երկրաշարժի ուժգնութենէն աւելի վնասակար եղած է «*համակարգման բացակայութիւնը, ծրագրաւորման բացակայութիւնը եւ*

Շար.՝ Էջ 9 ➤

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

ԽԱՂԱՂԱՐԱՐ ԴԷՏԵՐՈՒ ԵՒ ՈՒԺԵՐՈՒ ՄԱՍԻՆ




Ս. Սուսիւրեան

Երոպացի դետերու երկրորդ խումբ մը, 50 անգն է 50 (հաւանաբար) գինեալ, Հայաստան հասաւ եւ տարբեր ալիքներ բարձրացուց քաղաքական ու ժողովրդային շրջանակներու մէջ: Անոնց կեդրոնը Վայքի մէջ է, Եղեգնաձոր (տեսնել քարտեզին վրայ), Ատրպեյճանի եւ Նախիջեւանի սահմաններուն միջեւ, Սիւնիքի սեմին:

Իշխանութեան շրջանակը, որոշ քաղաքացիներու պէս, կը յուսայ, որ այս անգամ դետերուն գործը քիչ մը աւելի ազդու պիտի ըլլայ. ֆրանսացի, գերմանացի եւ այլ գիւտարարականներ պիտի յաջողին զսպել ազերիական ոտնձգութիւնները, մինչեւ իսկ յոյս կայ, որ անոնք պիտի կարենան վերաբանալ Բերձորի անցքը, վերցնել Արցախի պաշարումը: Ո՛վ պիտի չուզէր, որ նման առաքելութիւն յաջողէր:

Չմտնեք քաղաքական արձագանգներուն բաւիղներուն մէջ, այլ միան նշեք, թէ կայ նաեւ հատուած մը, որ յոյսեր չի կապեր այս հարիւր դետերուն, գիտնալով, որ շինծու եւ պարտադրուած սահմանին միւս կողմը ո՛վ կանգնած է. գիտեն, որ թուրքն ու ազերին տրամադիր չեն ականջ տալու կոչերուն, միջնորդներու եւ խաղաղութիւն խոստացողներուն: Առաջին խումբին առաքելութեան արդիւնքն ալ չէ մոռցուած:



Մէկդի ձգեք նաեւ ռուսական հակազդեցութիւնները, անոնց յարուցած վեճերն ու մտավախութիւնները, եւ պահ մը մեր աչքերը սեւեռեք հազարաւոր քիլոմետր հեռուները, հասնիք... Ափրիկէի արեւմտեան գօտին, ուր կան Մալի, Պուրքինա Ֆասօ եւ նման երկիրներ:

Այս օրերուն, քիչ-շատ ծանօթ «ճաշ» մըն ալ հոն կրակի վրայ դրուած է: Ֆրանսա իր ուժերը կը հեռացնէ յիշեալ երկիրներէն, մինչեւ իսկ դիւանագիտական սուր բանավեճ ստեղծուած է այդ երկիրներուն ու Ֆրանսայի միջեւ:

Չաճապարեք: Մալին եւ Պուրքինա Ֆասօն (որ Նախագահ Վերին Վոլթա կը կոչուէր) Ֆրանսայի գաղութներուն շարքին էին 1890-ական տարիներէն սկսեալ, անկախացան 1960-ին: (Գաղթատերերու ախորժակներուն մասին երկար չխօսինք): Շուրջ 10 տարի առաջ, երբ արաբական աշխարհը Նոր սկսած էր տառապիլ դժոխային «գարուն»-ի կրակներով, ափրիկեան շրջաններ ալ ինկան նմանօրինակ հոսանքներու գիրկը: Իսկամ ծայրայեղականներու անունները կրող խմբաւորումներ տարուէ տարի իրենց ոճրային արարքներու գօտին տարածեցին բազմաթիւ երկիրներու, ներառեալ՝ Մալիի եւ Պուրքինա Ֆասօյի մէջ (չկրկնեք նաեւ, թէ Էրտողանի Թուրքիան ինչպիսի՛ կապեր ունի ծայրայեղական խմբաւորումներուն հետ): Անշուշտ կային ներքին հակամարտութիւններ ալ: Հարցը հոն հասաւ, որ Նախկին գաղթատերը պատրաստակամութիւն յայտնեց գիւտարարական օժանդակութիւն տրամադրել իր «ճագուկներուն»: Բազմահազար բանակայիններ հասան այդ (եւ շրջակայ) երկիրներ. Պուրքինա Ֆասօ ֆրանսացի ուժեր ընդունեց 2018-ին: ՉԻՆՈՒՐՈՒՄԿԱՆ ԳՈՒՆԴԵՐԸ լիովին գինուած էին, անոնց գլխաւոր առաքելութիւնը պիտի ըլլար դէմ դնել ահաբեկչական խմբակներուն:

Տարիները սահեցան, սպասուած արդիւնքը չիրականացաւ, գոնէ այն չափով՝ որ մասամբ իրականացներ խաղաղութեան խոստումները: Օրինակի համար, ոսկիով հարուստ Պուրքինա Ֆասօն այժմ կը դասուի աշխարհի ամենէն աղքատ եւ անապահով երկիրներուն շարքին: Դեպքերը այնպէս մը զարգացան, որ տեղւոյն իշխանութիւնները (ներքին վերիվայրումներէ ետք), պահանջեցին, որ Ֆրանսայի բանակները հեռանան իրենց հողերէն: Եւ ահա, ֆրանսական բանակները կը քաշուին, տեղի կ'ունենայ նաեւ դեսպաններու տունդարձ եւ այլն:

Ըսինք՝ դեպքերը այնպէս մը զարգացան որ...: Այդ «զարգացումներուն» մէկ գիծն ալ... ռուսական ազդեցութեան յաւելումն է Ափրիկէի արեւմտեան այդ գօտիին մէջ: Տեղացիք սկսած են գործակցիլ ռուսական ապահովութեան կազմակերպութիւններու հետ: Շրջանը Ուքրանիա չէ, բայց դժուար չէ նորուագծային նմանակումներ գտնել: Այլ խօսքով, ֆրանսացի ՉԻՆԵՄԼ ուժեր եւ այլ դետեր յաջողութեան չհասան իրենց առաքելութեան մէջ: Թէ ռուսերը ի՞նչ յաջողութիւն պիտի ունենան՝ այլ հարց:

Ընթերցողս հիմա իրաւունք ունի հարցնելու: Մեզի ի՞նչ՝ Մալին ու Պուրքինա Ֆասօն: Մեզի ի՞նչ Ուքրանիան: Աւելին... մեզի հետ ի՞նչ կապ ունին Պայտըրի մը (եւ այլոց) Ուքրանիա եւ Լեհաստան այցելութիւններն ու անկէ հնչող զինարշաւները: Մեզի ի՞նչ, թէ Փութին կ'առկայի կորիզային զենքերու մասին բանակցութիւնները, կը սաստկացնէ ռմբակոծումները,

Շար.՝ Էջ 9 ➤

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1

Իրենց կարգին պատուիրակության անդամները յայտնեցին, թե Լիբանանի ժողովուրդը զօրավիզ կը կանգնի Սուրիոյ ժողովուրդին, ապա կարելոր համարեցին երկու երկիրներու յարաբերութեան զարգացումը տարբեր ոլորտներու մէջ:

Պատուիրակութեան մաս կը կազմեր նաեւ Լիբանանի երեսփոխանական հայկական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

ՆՍՕՏՏ ԱՐԱՍ...

Սկիզբ՝ էջ 1

յայտնեց Յալէայի կուսակցապետին՝ աղէտալի երկրաշարժին հետեւանքով զոհուած սուրիացիներուն համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

Կուսակցապետը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին՝ վշտակցութեան եւ ցաւակցական այս այցելութեան համար:

ՎԵՆԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ...

Սկիզբ՝ էջ 1

յայտնեց Յալէայի նահանգապետին՝ աղէտալի երկրաշարժին հետեւանքով զոհուած սուրիացիներուն համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

Նահանգապետը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին՝ վշտակցութեան եւ ցաւակցական այս այցելութեան համար:

ՌԻԾԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ...

Սկիզբ՝ էջ 1

Կեդրոնի ընդի. տնօրէն դոկտ. Ռաւտ Ահմատ ՍԱՆԱ-ին յայտնեց, որ երեկոյեան արձանագրուած ցնցումը 6 Փետրուարի երկրաշարժին յետցնցումներէն մէկն էր:

Հայ համայնքէն զոհեր, վիրաւորներ կամ նիւթական վնասներ չարձանագրուեցան, սակայն մեր ժողովուրդի գաւակները խուճապի մատնուած կրկին դուրս եկան իրենց բնակարաններէն եւ գիշերեցին Արամ Մանուկեան ժող. Տան, Ս. Աստուածածին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներու եւ «Նալպանտեան» սրահին, Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի, ՀԱՇՄ-ի ընտանեկան պարտեզի եւ այլ եկեղեցիներու կամ ակումբներու մէջ, ուր ապաստանեալ ժողովուրդին համար ապահովուած էին սնունդ, ջեռուցում եւ կենցաղային այլ անհրաժեշտութիւններ, իսկ կամաւոր հայ երիտասարդներ կը ծառայէին ժողովուրդին միւսչեւ առաւօտ:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ...

Սկիզբ՝ էջ 8

անկարողութիւնը»:

Աղետը աւելի խորացնելով, «2019-ին թուրքիոյ նախագահ Էրտողան գովաբանեց իր կուսակցութեան ընդունել տուած օրէնսդրութիւնը, որ թոյլ կու տար ներել գոյքի սեփականատէրերուն շինարարական իրաւախախտումները՝ առանց շէնքերը անոնց չափանիշներուն համապատասխանեցնելու», կը գրէ «Նիւ Եորք Թայմզ»: Միայն երկրաշարժի գօտիին նման համայնքում տրուած է միւսչեւ 75 հազար շէնքերու համար: Հեզնակաւորէն, երկրաշարժէն միայն քանի մը օր առաջ, կառավարութիւնը կը պատրաստուէր հերթական համայնքում յայտարարել շինարարութեան իրաւախախտողներուն համար: Այժմ թրքական կառավարութիւնը կը ձերբակալէ շինարարական կապալառուները, որոնք առնչութիւն ունեցած են փլած շէնքերուն հետ: Բայց իսկական մեղաւորները պետական պաշտօնեաներն են, որոնք հաւանութիւն տուած են այս ցածորակ շէնքերու կառուցման: Այս շէնքերու սեփականատէրերէն շատերը սերտ կապեր ունին նախագահ Էրտողանի կամ անոր իշխող կուսակցութեան հետ:

Փլատակներու տակ թաղուած քաղաքացիները փրկելու համար հրատապ միջոցներ ձեռնարկելու փոխարէն, Էրտողան հակահարուած կու տայ իր քննադատներուն: Այսպիսի քննադատներէն մէկը՝ «Թուրքիոյ մէջ երկարամեայ փորձ ունեցող ֆրանսացի լրագրող Կիտոմ Փերիէն, ձերբակալուեցաւ Սթամպուլի օդանավայանը եւ արտաքսուեցաւ Ֆրանսա՝ թուրքիա կարենալ վերադառնալու հինգ տարուան արգելքով», կը հարորդէ Մերձավոր Արեւելքի հիմնարկը: Աւելին, երկրաշարժի խառն օրերուն կառավարութիւնը ժամանակաւորապէս փակեց ընկերային մետիան՝ թրքական կառավարութեան անկարողութեան քննադատութիւնը արգելափակելու համար:

Jerusalem Post 20 Փետրուարին հրապարակած է յօդուած մը՝ «Երկրաշարժէն ետք թուրքիոյ Էրտողանը քաւութեան նոխագներու որս կ'ընէ» վերնագրով: Յօդուածին մէջ կ'ըսուէր, որ «Էրտողանի թուրքէ տունը փոխ եկած է երկրաշարժէն: Արդէն կը շտապեն քաւութեան նոխագներ գտնել, ինչպէս նաեւ կողոպտիչներ ձերբակալել...: Գալիք ընտրութիւններուն ընդառաջ, Էրտողանին նոյնքան դժուար կ'ըլլայ բացատրել ընկերային ցանցերու մէջ շրջանառուող տեսակիւթ մը, ուր ան կը պարծենայ, որ 2019-ին հաստատած է Քահրամանմարաշի երկրաշարժի կեդրոնը գտնուող շէնքերու շինարարական համայնքումը: Այս կը նշանակէ, որ անոնք ազատած են շինարարական եւ երկրաշարժի կանոնակարգերուն հետեւելէ: Երկրաշարժի տասը նահանգներուն ընդգրկուած էր գրեթէ 295 հազար շէնք»:

Աղէտալի երկրաշարժի անսպասելի կողմնակի ազդեցութիւններէն մէկը այն է, որ թուրքիա քանի մը տարի զբաղած կ'ըլլայ աւելի քան հարիւր հազար փլած շէնքերու վերակառուցմամբ: Թուրքիոյ ուշադրութիւնը կը շեղի Սուրիոյ, Իրաքի, Կիպրոսի, Յունաստանի, Հայաստանի եւ Լիպիոյ վրայ յարձակումներէ: Այս երկիրները որոշ ժամանակով մը հանգիստ շունչ կը քաշեն...

ԽԱՂԱՂԱՐԱՐ...

Սկիզբ՝ էջ 8

աւելի բարձրաձայն կը հնչեն Զինաստանի, Իրանի եւ այլոց հետ Մոսկուայի մերձեցման երգերը: Տակաւին, մեզի ինչ, թե Իրանի մէջ ինչպիսի «ապուրներ» կ'եփին...: Մենք հիմա կ'ուզենք (եւ արդարօրէն իրաւունք ունինք սպասելու) որ եւրոպացի կէս-զինեալ 100 դէտերուն առաքելութիւնը յաջողի, սուտ ելլեն բոլոր այն տեղեկութիւնները, ըստ որոնց՝ անոնց նպատակն է Հայաստանէն եւ Արցախէն ռուսական ուժերու հեռացումը, իրականանան այն ակնկալութիւնները, որ Հայաստան թէ՛ Արեւմուտքի եւ թէ՛ Արեւելքի աջակցութիւնը պիտի ունենայ թուրք-ազերիական դաւերուն դէմ դնելու համար, մեզի հետ աշխարհն ալ պիտի տեսնէ, որ 2.5 տարիէ ի վեր ազերիներուն ձեռքը մնացող մեր գերիները պատանդ բռնուած են Ազրպէյճանի կողմէ, որ ահա նոր նախապայմաններ կը դնէ զանոնք ազատ արձակելու համար (մի՛ մեղադրէք նաեւ անոնք՝ որ կ'ըսեն, թէ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ խաղաղութիւնը պիտի անցնի նախապայմաններէ գերծ ճամբաներէ):

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՎՆԱՍՆԵՐՈՒ ՑԱՆԿԱԳՐՄԱՆ ԿՈՉ

Կը խնդրուի Բերիոյ Հայոց Թեմի Յալէայի բնակիչներէն ներկայանալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահ Չորեքշաբթի, 8 Փետրուարէն սկսեալ, ամէն օր, առաւօտեան ժամը 10:00-էն 2:00 սկսեալ, իրենց հետ ունենալով անձնաթուղթ, ընտանեկան տետրակ, բնակարանի սեփականատիրութեան փաստաթուղթ, երկրաշարժին հետեւանքով բնակարանի կրած վնասներու լուսանկարներ՝ ցանկագրելու իրենց բնակարաններուն կրած վնասները:

Դիան Ազգ. Առաջնորդարանի

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիւլփօշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլփօշեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ՎՍՏՂԵՐԸ



Խոյ

Չափազանց մտահոգ էք: Ձեր գործերը յաջողությամբ պիտի պսակուին եւ դուք հանգստանաք: Մտերիմ բարեկամի մը աջակցութիւնը պիտի վայելէք:



Ցուլ

Կարճ հանգիստի մը կարիքը ունիք բնութեան գիրկին մէջ: Ձեր ժամանակաւոր խնդիրները պիտի լուծուին վերջապէս:



Երկուորեակ

Խուսափեցէ՛ք նախանձոտ մարդոցմէ: Ձեր գործընկերներուն հետ լաւ յարաբերութիւններ մշակեցէ՛ք եւ հաճելի պահեր ապրեցէ՛ք:



Խեցգետին

Առանց յաւելեալ ճիգերու պիտի կարենք բարձունքներ սուաճել: Սիրային յարաբերութիւն մը պիտի ունենաք եւ նոր ծանօթութիւններ հաստատեք:



Առիւծ

Ձեր նպատակները իրականացնելու համար մեծ ճիգեր թափելու կարիքը ունիք: Դժուարութիւններ եւ խոչընդոտներ պիտի ըլլան, սակայն ձեր ներքին խաղաղութեան շնորհիւ պիտի յաղթահարեք զանոնք:



Կոյս

Արդիւնաւետ աշխատանք եւ եկամուտներու աճ կը սպասուին ձեզի այս շաբաթ: Ձերմ եւ կայուն սիրային յարաբերութիւն մը պիտի ունենաք: Մօտիկ բարեկամ մը պիտի օգնէ ձեզի:



Կշիռք

Դուք շատ ընկերասեր էք եւ դիրութեամբ կրնաք լեզու գտնել ձեր գործընկերներուն հետ: Մեծ հեղինակութիւն վայելող անձի մը հետ պիտի հաղորդակցիք ու գնահատուիք:



Կարիճ

Նորանոր փոփոխութիւններ պիտի ունենաք ձեր կեանքին մէջ: Բացասական յոյզերը պիտի կործանէք եւ յամառութեամբ հասնիք ձեր բարի նպատակներուն:



Աղեղնաւոր

Ձեր առողջութեան հոգ պետք է տակիք: Ընտանիքի անդամներուն հետ հաճելի պահեր եւ հոգեկան խաղաղութիւն պիտի ունենաք:



Այծեղջիւր

Պէտք է ժամանակ տրամադրեք մարզանքի եւ հոգեկան առողջութեան: Ձեր աշխատանքի խնդիրները պիտի լուծուին եւ դուք պիտի գնահատուիք բոլորին ներկայութեան:



Ջրհոս

Ձեր նախկին գործընկերներուն հետ հաճելի եւ օգտաշատ պահեր պիտի ապրիք: Ձեր գիտելիքները պիտի բազմապատկուին եւ նոր յաջողութիւններ արձանագրեք:



Ձուկ

Աշխատանքային ծանրաբեռնուածութեան պատճառով հոգեկան տագնապներ պիտի ունենաք եւ յուսահատութեան մատուիք: Բարի մարդոց հովանաւորութիւնը պիտի վայելէք:



ԻՆՉՊԷՍ ՊԷՏԷ Է ՎԱՐՈՒԻԼ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԴԵՏ ԵՐԿՐԱՇԱՐԺԷՆ ՅԱՌԱՋԱՅՈՂ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԷԻՆ

Մի՛ խորհիք, որ մանուկը չի կրնար ըմբռնել ու հասկնալ իր շուրջի պատահած դէպքերը: Տագնապի մանրամասնութիւններուն մասին չխօսիլն ու չպատմելը մոռացութեան չեն մատներ զանոնք, այլ անելի կը շեշտեն ու կ'ամրացնեն անոնց վատ ազդեցութիւնը մանուկի հոգիին խորերը:



Հոգեկան բնական յուզմունքները, ինչպէս՝ լացը, բարկութիւնն ու հոգեկան տագնապը, մանուկներուն համար հասկնալի եւ ընդունելի են, ուստի մի՛ փորձեք պահել ձեր վախը: Խուսափեցէ՛ք, սակայն, չափազանց պոռթկումներէն եւ վախազու արտայայտութիւններէն, որոնք սարսափի կը մատնեն մանուկները:

Անհրաժեշտ է գրուցել անոնց հետ եւ թոյլատրել, որ անոնք պատմեն իրենց տեսածը, լսածն ու զգացածը՝ նշելով, որ դուք ալ նոյնպիսի սարսափի մատնուած էք:

Իրականութեան ակնարկեցեք՝ առանց ստելու եւ երեւակայական առասպելներ հիւսելու, որովհետեւ մանուկը պիտի գիտակցի իրականութեան: Փոքրիկը անելի ապահով կը զգայ ինքզինքը, երբ դուք ճշմարտութիւնը կ'ըսեք:

Անոր ներկայութեան խուսափեցէ՛ք դիտել սրտամկիկ պատկերներ կամ հետեւիլ համացանցի վախ յառաջացնող լուրերուն ու տեսանիւթերուն: Չիկնք զբաղեցուցէ՛ք իր նախասիրած գործերով, ինչպէս՝ գծագրութիւն, երգ, պար, մարզանք եւ այլն:

Իր նախաձեռնութիւններուն համար քաջալերեցէ՛ք զայն, որպէսզի լիցքաւորուի հոգեկան անհուն գոհունակութեամբ:

Մանուկներուն հոգիները դիրաբեկ են, ուստի գիրենք առողջ պահելը մեր ճիտին պարտքն է: Ապահովութիւն ներշնչեցէ՛ք ձեր մանուկներուն եւ գրկեցէ՛ք զիրենք, գուրգուրանք տածելով ամենէն դժուար կացութիւններուն մէջ անգամ:

ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԻԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ

Երկրաշարժները երկրի մակերեսային վրայ տատանումներ յառաջացնող ստորգետնեայ ցնցումներ են: Ի՞նչ պէտք է ընել երկրաշարժի ընթացքին.

Նախ պէտք է խուճապի մատնուիլ, որովհետեւ խուճապը կրնայ հոգեբանական եւ ֆիզիքական ցնցումներ պատճառել:

Եթէ փողոցն էք, խուսափեցէ՛ք ելեկտրականութեան սիւներէն, շէնքերէն եւ մետաղալարերէն:

Փորձեցէ՛ք չմտնել ստորգետնեայ անցումներ:

Փակ տարածքի մը մէջ, տունը կամ շէնքի մը մէջ գտնուելու պարագային, պէտք է խուսափիլ վերելակներէն կամ աստիճաններէն:

- Տան ամենէն ապահով սիւնին մօտ կանգնեցէ՛ք, կամ փայտեայ ամուր մակերեսով սեղանի մը տակ պատսպարուցէ՛ք, մի՛նչեւ ցնցումներուն դադրիլը:





Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ մարզական գերագոյն մարմինն ու մարզական դաշնութիւնները ցաւակցական հեռագիրներ ստացան միջազգային երկիրներու մարզական այլ պատասխանատուներու եւ գրասենեակներու կողմէ, ինչպէս նաեւ անոնք իրենց մարդասիրական օժանդակութիւնները ուղղեցին Սուրիա:



SYRIAN OLYMPIC COMMITTEE
اللجنة الأولمبية السورية

- Սուրիոյ ֆութպոլի Ա- հաւաքականը Միացեալ Եմիրութիւններու մէջ Մարտ 25-ին եւ 28-ին բարեկամական մրցումներ պիտի կատարէ Թայլանտի եւ Պահրէյնի կազմերուն հետ: Այս առաջին հաւաքը պիտի ըլլայ սորանշանակ մարզիչ Յեքթոր Բուփորին:

- Սուրիոյ պասքէթի աղջկանց U-16-ի հաւաքականը Իրաքի մէջ կայացած Արեւմտեան Ասիոյ մրցաշարքի աւարտին յաջողեցաւ պարտութեան մատնել Լիբանանի կազմին եւ տիրանալ պիտոյեանութեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆԸ ՍՈՐԻՆԻՈՅԻՆ ԴՅՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԵ

Ֆրանսայի ախոյեան ՓՍԺ-ի մարզական տնօրէն Լուիշ Կամպուշը բանակցութիւն կը կատարէ իտալական Ռոմայի Փորթուկալցի գլխաւոր մարզիչ Ժոզէ Սորինիոյի հետ փարիզեան ակումբի գլխաւոր մարզիչի պաշտօնը ստանձնելու համար, փոխարինելու ֆրանսացի Զրիստոֆ Գալտիէին: Ֆրանսական Footmercato-ը յիշեց թէ ֆրանսական ակումբը Ռոմայի ղեկավարութեան հետ այս հարցով բանակցութիւն չէ կատարած եւ ըստ պայմանագրին, Սորինիոյի ժամանակաշրջանը իտալական խումբին հետ կաւարտի 2024-ի կեսին: Փարիզ Սան Ժերմանի մարզական պատասխանատուն արտայայտուեցաւ թէ Զրիստոֆ Գալտիէն կրնայ հեռացուիլ փարիզեան խումբէն արդէն յաջորդ ամիս, եթէ չկարողանայ խումբը հասցնել Զեմփիընզ Լիկի 1/8 եզրափակիչ յաղթելով Գերմանիոյ ախոյեան Պայերն Միլնէրին: Փարիզի մէջ տեղի ունեցած առաջին խաղին ՓՍԺ-ն 1 - 0 արդիւնքով զիջեցաւ գերմանական խումբին, եւ անոնց դարձի հանդիպումը տեղի պիտի ունենայ Մարտ 8-ին Գերմանիոյ մէջ:



ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԸ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՕՍԱՍՈՒԱՅԻՆ

Սպանիայի առաջնութեան 22-րդ հանգրուանի մրցումներուն մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը յաջողեցաւ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնել հիւրընկալ Օսասունային: Իտալացի Գարլօ Անչելոթիի գլխաւորած խումբը 78-րդ վայրկեանին արագիւցի Վինիսիուս Ժունիորի կողմէ փոխանցուած գնդակը ստանալով Վալվերտին կրցաւ նշանակել առաջին կոլը: 89-րդ վայրկեանին Վինիսիուս Ժունիորը կրցաւ ցնցել մրցակիցին դարպասը, բայց իրավարարը VAR-ի միջամտութիւնէ ետք չեղեալ նկատեց կոլը, որմէ երկու վայրկեան ետք Մարքօ Ասենսիոն կրկնապատկեց արդիւնքը եւ հանդիպումը ավարտեցաւ 2 - 0 ի նպաստ:



ԽԱԶՐԱՌ (ՄԽ 427)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Անապատի մէջ ջրաւետ պուրակ: Արարատի տարածաշրջանի գիւղերէն:
- Տառի մը անունը: Աղբիւր: 5300: Առարկայ:
- Դնդեր: Ժողովուրդին իմաստութիւնը մարմնացնող անձ:
- Տեղ:
- Իրանահայ օրաթերթ: Խառնատառ՝ ցուցական դերանուն: Իրերայաջորդ տառեր:
- Միջազգային կազմակերպութիւն մը: Հակառակ՝ առատ:
- Յարաբերական դերանուն: Հակառակ՝ տառի մը անունը: Չայնանիչ: Գոյութիւն ունին:
- Պատշաճ: Իգական անուն:
- Ժայռ: Հակառակ՝ անձնական դերանուն:
- Արգելական: Ռամկօրէն՝ այր:
- Իգական անուն: Հակառակ՝ տառի մը անունը: Ծոխիլ:
- Բայց: Ոտնատեղի:


Ուղղահայեաց

- Շէնքը ամրացնող յենարան: Լեցուն:
- Խորխտ: Իգական անուն: Հակառակ՝ ձայնանիչ:
- Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ գօտի:
- Աշակերտ: Յովհաննէս Թումանեանի հեղինակած երգ. «..... Տակից»:
- Փոքրացնող մասնիկ: Եգիպտական դից: Հակառակ՝ ժխտական պատասխան:
- Մորթի վրայ բիծ: Նմանաձայն տառեր: Կրկին:
- Տապալիլ: Ցաւի ճիչ:
- Երկրի ցնցում: Հակառակ՝ սարսափ:
- Հակառակ՝ տղամարդ: Երկրագործական գործիք:
- Աստուածային: Հակառակ՝ ժամանում:
- Ձայնանիչ: Հայկական դիցաբանութեան մէջ պտղաբերութեան եւ արգասաւորութեան աստուածը:
- «Ես եւ Ուրիշներ» երկին պոլսահայ հեղինակին մականունը: Խորք:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 426)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	պ	ա	խ	հ	ր	ա	բ	ն	ր	բ		
2	ա	ն	ա	ն	ի	կ	ա	ր	ա			
3	ր	բ	ն	ի	կ	ա	ր	կ	դ	ա		
4	ս	ր	ի	ն	գ	գ	ի	ր	ե	մ		
5	ս	յ	ս		տ		ա	վ		օ		
6	մ	ա	խ	ա	ն	ք		ե	մ	է	ս	
7	ա	ր	ն	ն	ա	ն	ա	ա		ա		
8	յ	ի	շ	ա	շ	ա	ր		լ	յ	ն	հ
9	ր	տ	կ		զ	ա	հ	ն		ե		
10		ս		շ	ա	հ	է	ն		խ	ա	
11		ս	է	ր	ն	է	ն	գ		ա	ն	
12	ձ	ա	գ	ա	ր	տ		ե	կ			

ԼՈՒՐԵՐ





ՆՍՕՏՏ ԱՐԱՍ Ա. ՎԵՆԱՓԱՌ...

Սկիզբ՝ Էջ 1

Ս. Աստուածածին եկեղեցւոյ ողոյանջին ներքոյ, Նորին Սրբութիւնը դիմաւորուեցաւ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արիի Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի, Սուրիոյ Յայ Աւետարանական Յամայնքի Յամայնքապետ Վերապատուելի դոկտ. Յարութիւն Սելիմեանի, Յալէպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական-հիւպատոս Բաբգէն Պատալեանի, ՀՀ մարդասիրական առաքելութեան խումբի պատասխանատուին, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեանի, Ազգային երեսփոխանական ժողովի եւ Ազգային Վարչութեան անդամներուն, հալէպահայ երեք կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, հալէպահայ մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններու՝ Յամազգայինի, ՀՄԸՄ-ի, ՍՕ Խաչի, ՀԲԸՄ-ի, ՀԵԸ-ի, Նոր Սերունդ, Կրթասիրաց, Ազգային Մշկթ., Գերմանիկ Վասպուրական Մշկթ. միութեանց, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներուն, եկեղեցիներու թաղական խորհուրդներուն, դպրաց դասերուն, ՍԵՄ-ի, Սուրիոյ Պատանեկան Միութեան անդամներուն, ՀՄԸՄ-ի տարազաւոր սկաւտներուն եւ հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Վեհափառ Յայրապետի շքախումբին մաս կը կազմէին «Կիլիկիա» Մատենադարանի տնօրէն եւ Բերիոյ Յայոց Թեմի Նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեան, գաւազանակիր Յոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, Յոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, Յոգշ. Տ. Չաւեն Վրդ. Նաճարեան, Լիբանանի ՀՅԴ Կ. Կոմիտէի ներկայացուցիչ եւ Լիբանանի խորհրդարանի երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան աւագ ատենապետ Ստեփան Տեր Պետրոսեան:

Եկեղեցւոյ մուտքին տեղի ունեցաւ աղ ու հացի աւանդական օրհնութիւն, Յամազգայինի «Սարդարապատ» պարախումբի պարմանուիներուն տարազաւոր ներկայութեամբ, ապա Վեհափառ Յայրապետը թափօրով եւ դպրաց դասի «Յրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց Ս. Աստուածածին եկեղեցի, ուր հանդիսապետեց Սրբ. Վարդանանց Չօրավարաց տօնին սուրբուած Սուրբ եւ Անմահ Պատարագին, հոծ հաւատացեալներու ներկայութեան: Պատարագը մատուցեց Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեան:

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան հոգեւորանակաց դասուն, Ազգ. Իշխանութեան, միութիւններուն եւ հալէպահայութեան անունով ողջունեց վեհափառ հայրապետը եւ փառք տուաւ Աստուծոյ, որ երկրաշարժէն փրկուած հալէպահայութիւնը արժանի դարձաւ հայրապետին գօրակցական այցելութեան:

Արամ Ա. Կաթողիկոս ժողովուրդին ուղղեց իր հայրապետական պատգամը, ըսելով. «Եկած եմ Յալէպ ձեր ցաւը բաժնելու, ձեր մտահոգութիւնը իմանալու եւ երկրաշարժին յառաջացուցած վնասներուն աւելի մօտէն տեղեակ դառնալու»: Ապա աւելցնելով ըսաւ. «Յրաշք է մեր գոյութիւնը այսօր, փոքր ազգ եղանք, սակայն Աստուծոյ դառնալով, Աստուծոյ ներկայութեամբ մեր կեանքը հզօրացնելով գոյատուեցինք. այսօր մեր ժողովուրդը տագնապի մէջ է փաստօրէն ամէն տեղ, Յայաստանի մէջ, Ղարաբաղի մէջ, Լիբանանի մէջ, Սուրիոյ մէջ եւ ամենուր: Տագնապին ձեռք, տարողութիւնը տարբեր է, սակայն ըստ էութեան մեր ազգը տագնապներով շրջապատուած է, տագնապներով լեցուն է մեր կեանքը: Այս պայմաններուն մէջ մենք պետք չէ յուսահատինք, այլ մեր հաւատքով հզօրացած պետք է դառնանք Աստուծոյ, միշտ ըսելով. «Դուն ես, Աստուած, մեր կեանքի հզօրութեան աղբիւրը»:

Արամ Ա. Կաթողիկոս հաստատեց. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով, կառոյցներով, մարմիններով, իր բոլոր կարելիութիւններով ձեզի հետ է սիրելի ժողովուրդ հայոց, Սուրիոյ տարածքին հաստատուած մեր ժողովուրդի գաւակներուն հետ: Կըրցաւոր որ մենք վնասներ, մահեր ունեցանք այստեղ, նաեւ նախկին Կիլիկիան աշխարհի մեր քաղաքներուն մէջ՝ Մալաթիա, Մարաշ, Իսկէնտերուն, ... այս բոլորը կը յիշենք այսօր, որ Աստուած իր երկնքի թագաւորութեան մէջ ընդունի հոգիները գոհերուն, շուտափոյթ ապաքինում պարգեւէ բոլոր հիւանդներուն, վիրաւորներուն: Տակաւին վիրաւոր եւ մեր ժողովուրդի գաւակները, գիտեմ, յառաջիկայ ժամերուն աւելի մօտէն ամբողջական կերպով պիտի իմանան թէ ի՞նչ են կարիքները, մտահոգութիւնները մեր ժողովուրդի գաւակներուն եւ մեր կարելին, գերագոյնը պիտի կատարենք, որպէսզի ձեր ցաւերը բուժուին, ձեր մտահոգութիւնները վերանան, որպէսզի կարենանք ՄԻԱՍՆԱԲԱՐ ծառայել մեր ժողովուրդի գաւակներուն»:

Վարդանանց տօնը յիշատակելով, Վեհափառ Յայրապետը յայտնեց, թէ հայ ժողովուրդը Ղեւնդներ ու Վարդաններ տուաւ, որոնք վասն հաւատոյ ու վասն հայրենեաց գիտակցօրէն ու հաւատքով Աւարայր գացին եւ իրենց արիւնը թափեցին: Հետեւաբար, մեր կեանքի տագնապներուն ու չարիքներուն դիմաց պետք չէ ընկճուիլք:

Նորին Սրբութիւնը եզրափակելով ըսաւ. «Այս պահուն, այս սրբազան խորանէն ես կը կ'ուղղեմ մեր ժողովուրդի գաւակներուն ամէն տեղ, մեզի համար սրբազան պարտաւորութիւն է օգնել Սուրիոյ հայերուն եւ մասնաւորաբար Յալէպի հայերուն, տանք ինչ որ կրնանք եւ մասնակից դառնանք Սուրիոյ հայութեան վերականգնումին»:

Պատարագէն ետք, Վեհափառ Յայրապետը լրատուամիջոցներուն դիմաց կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ չեղեալ համարելու Սուրիոյ վրայ սահմանուած պատժամիջոցները եւ փութալու աղէտահար ժողովուրդի օգնութեան: